Ձեր՝ 13.09.2013թ. թիվ 2621/1367 և 2621/1368 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցի ընթացքում արձանագրված մի շարք թերությունների և խախտումների կապակցությամբ ՀՀ ոստիկանության շտաբում կատարվել է ծառայողական քննություն, որի ընթացքում պարզվել է, որ ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար դեռևս 2009թ-ից բաժնի և <<Արա Ծատրյան>> Ա/Ձ-ի միջև կնքվել է պայմանագիր, որը յուրաքանչյուր տարի վերակնքվել է: Ընթացիկ տարվա համար պայմանագիրը կնքվել է փետրվարի 1-ին, որը սննդի գների բարձրացման կապակցությամբ 01.06.2013թ. ենթարկվել է փոփոխության և դրա հիման վրա մինչ օրս իրականացվում է ՁՊՎ-ում պահվող անձանց սննդի տրամադրումը: Հիշյալ պայմանագիրը որպես ֆինանսական փաստաթուղթ պահվում է բաժնի հաշվապահությունում, այլ ոչ թէ ՁՊՎ-ում:

ՀՀ ոստիկանության համակարգի գործող ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար, սկսված 2013թ. փետրվար ամսից, ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության կողմից երկու անգամ հայտարարվել է մրցույթ և մասնակից չլինելու պատճառով այն չի կայացել, որից հետո ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցվել է ՁՊՎ-ների սննդի մատակարարումը իրականացնել բանակցային կարգով՝ այսինքն պայմանագրերի կնքման միջոցով: Այդ նպատակով ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության կողմից մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկված նոր օրինակելի ձևի պայմանագիր, որի առկայության դեպքում է միայն հնարավոր փոխանցել մատակարարված սննդի դիմաց ներկայացված գումարը: **Վերը նշված գործընթացի ձգձգման արդյունքով է պայմանավորված <<Արա Ծատրյան>> Ա/Ձ-ին սննդի մատակարարման դիմաց չվճարված պարտքի գոյացումը, որը սակայն խոչընդոտ չի հանդիսացել ՁՊՎ-ում պահվող անձանց սննդով ապահովելուն և այն երբեք չի դադարեցվել հիշյալ Ա/Ձ-ի կողմից**:

Նշված գործընթացը սեղմ ժամկետում ավարտելու և ՁՊՎ-ներին սննդով ապահովող կազմակերպությունների հանդեպ ունեցած գումարային պարտքը մարելու ուղղությամբ ՀՀ ոստիկանության ղեկավարության կողմից հանձնարարականներ են տրվել համապատասխան ծառայություններին:

Ծառայողական քննության ընթացքում հիմնավորվել են Հ.Կրուտալևիչին ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ-ում արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն ժամկետը խախտելու, ձերբակալման առավելագույն ժամկետը լրանալուց 24 ժամ առաջ գրավոր կերպով նախաքննության մարմնին իրազեկում չտալու հանգամանքները, ինչպես նաև այլ խախտումներ և թերություններ, որոնց համար ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի հերթապահ մասի պետ, ոստիկանության մայոր Զ.Մինասյանը ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ ոստիկանության Կապանի բաժնի պետ Ա.Դավթյանը խիստ նախազգուշացվել է:

Ծառայողական քննության եզրակացությունը ուղարկվել է ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն՝ օպերատիվ խորհրդակցությունում քննարկելու և միջոցներ ձեռնարկելու նմանատիպ խախտումները հետագայում բացառելու համար:

**ՀՀ ոստիկանության շտաբ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1367 13.09.2013թվ.

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍԻ
ՄՏԻՆ № 3593
17 09 2013 թ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելելով ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Կապանի ՁՊՎ արձանագրեց, որ ՁՊՎ-ն չունի ՁՊՎ-ում պահվող անձանց անհրաժեշտ սննդով ապահովելու սննդի համապատասխան պայմանագիր և չի տրամադրվում անհրաժեշտ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անվճար սնունդը:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվեց, որ սննդի տրամադրման պայմանագիրը դադարացվել է սույն թվականի ապրիլի 2-ից, մոտ՝ 5 ամիս առաջ:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵՍՏԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՆ № 6188
17 09 2013 թ.

Պայմանագրի դադարեցման պատճառ է հանդիսացել սնունդ մատակարարող «Արա Ծատրյան» Ա/Ձ –ին գոյացած 92.400 ՀՀ դրամ պարտքը: */ փաստը հաստատող լուսանկար – 1/*

Միաժամանակ ավելացնենք, որ սույն թվականի ապրիլի 2-ից մինչ օրս տվյալ ՁՊՎ-ում պահվել է 75-ից 80 ձերբակալված և կալանավորված անձիք և չի պահպանվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները. *«... առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ»*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստը և մեկնաբանել թե ինչու.

1. Չի վճարվել գոյացված պարտքը, որն էլ պայմանագրի դադարեցման պատչառ է հանդիսացել
2. Չի կնքվում նոր պայամանգիր ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

3. Չի տրամադրվում սնունդ ՀՊՎ-ում պահվող անձանց:

*Միաժամանակ խնդրում ենք Դիտորդական խմբի հրատապ հաշվետվություններին տալ առանձին մեկնաբանություններ՝ չընդհանրացնելով մարզի մնացած ՀՊՎ-ներում առկա հիմնախնդիրների հետ:*

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1368 13.09.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՄՏԻՆ № 3934
17 09 13

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելելով ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Կապանի ՀՊՎ արձանագրել է, որ

1. Հարություն Վլադիմիրի Կրուտալևիչը Կապանի ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 30.08.2013թ-ին ժամը $16^{05}$-ին: Հաջորդիվ ձերբակալվել և ՀՊՎ է ընդունվել նույն օրը, ժամը՝ $17^{30}$-ին: 02.09.2013թ-ին քննիչի կողմից ներկայացվել է համապատասխան գրություն, այն մասին, որ <<մեղադրյալ Հ. Կրուտալևիչի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը կիրառելու միջնորդությունը քննության առնելու համար, խնդրում եմ հանձնարարել՝ համապատասխան աշխատակիցների միջոցով 2013թ-ի սեպտեմբերի 2-ին ժամը $16^{30}$-ին վերջինիս տեղափոխել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան>>:
   Արդյունքում՝ ինչպես քննիչի կողմից, այնպես էլ ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի պատասխանատուների կողմից անտեսվել է Հ. Կրուտալևիչի արգելանքի վերցնելու ժամը, որի հետևանքով խախտվել է Հ. Կրուտալևիչի ՀՀ Սահմանդրությամբ նախատեսված առավելագույն ձերբակալման 72 ժամը: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3/*
2. Գոռ Համլետի Ավագյանը հետաքննության մարմնի կողմից ձերբակալվել է 30.08.2013թ-ին ժամը $15^{45}$-ին:

<u>*Ձերբակալման առիթները*</u>

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
ՄՏԻՆ № 6189
«17» 09 2013թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

*Գոռ Համլետի Ավագյանը կասկածվում է ՀՀ քր. օր-ի 258 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ:*

*Ձերբակալման նպատակը.*

*Կասկածյալ Գոռ Համլետի Ավագյանին քրեական հետապնդում իրականացնող մարմին՝ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Սյունիքի մարզային քննչական բաժին ներկայացնելու նպատակով:*

Այսպիսով Գոռ Համլետի Ավագյանը 3 օր պահվել է ՁՊՎ-ում և ՁՊՎ-ից ազատ է արձակվել կրկին հետաքննության մարմնի կողմից և չի ներկայացվել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Սյունիքի մարզային քննչական բաժին, ինչպես նախատեսված է ձերբակալման արձանագրության մեջ: Միաժամանակ նշենք, որ Գ. Ավագյանին ազատ արձակելու հիմք է հանդնիսացել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձերբակալման առավելագույն 72 ժամը լրանալու փաստը: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 4,5/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն իրավախախտումների վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք Դիտորդական խմբի հրատապ հաշվետվություններին տալ առանձին մեկնաբանություններ՝ չընդհանրացնելով մարզի մնացած ՁՊՎ-ներում առկա հիմնախնդիրների հետ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org